

Բանալի բառեր՝ տեղական ինքնակառավարում, համայնք, տեսություն, առանձնահատկություն, բնորոշիչ:

ՀՏԴ 338(479.25):351/354

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱԳՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման գերակա ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում

Արսեն ՍԱՐԳՍՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտ

Գիտական ղեկավար՝
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ժամանակակից ժողովրդավարական հասարակությունն իր վրա պատասխանատվություն է վերցնում հասարակության բարեկեցության, մարդկային ներուժի զարգացման, բոլոր քաղաքացիների տնտեսական գործունեության իրականացման համար հավասար մեկնարկային պայմանների ապահովման և բոլոր սուբյեկտների իրավական շահերի պաշտպանության համար: Պետությունը պետք է առաջնորդվի հստակ սոցիալական կողմնորոշում ունեցող քաղաքականությամբ, իսկ դրա հիմնարար նպատակը պետք է լինի հասարակության հավասարակշռված, դինամիկ և կայուն զարգացման ապահովումը:

Այս խնդիրների լուծման գործընթացն ապահովելու նպատակով, յուրաքանչյուր երկիր, զարգացման որոշակի փուլում, ստեղծում է կառավարման համապատասխան համակարգ: Ժամանակակից աշխարհում պետության կառավարման տարածված համակարգերից է ժողովրդավարական կառավարման համակարգը, որի մաս է տեղական ինքնակառավարումը կամ տեղական ինքնակառավարման համակարգը:

Արդի պայմաններում քաղաքացիական հասարակությունը իրավական ժողովրդավարական պետության կայացման և պետական կառավարման արդյունավետության բարձրացման կարևորագույն նախադրյալներից մեկն է: Այս համատեքստում յուրաքանչյուր ժողովրդավարական երկրում բնակչությունը, նրա շահերը ներկայացնող հասարակական-քաղաքական կազմակերպություններն, ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ ձևավորում են պետական իշխանությունը և ՏԻՄ-երը, վերահսկում դրանց գործունեությունը:

Տեղական ինքնակառավարումը հանրային իշխանության մի ձև է, որը գոյություն ունի պետական իշխանության հետ միասին: Այն իր բնույթով քաղաքացիական նախաձեռնությունների արդյունքում ձևավորված և սեփական կարիքների բավարարման ուղղված քաղաքացիների համակարգ է: Միևնույն ժամանակ, տեղական ինքնակառավարումը պետական կառավարման համակարգի մաս չկազմելով՝ դրանով իսկ պահպանում է քաղաքացիական հասարակության առանձին, յուրահատուկ ինստիտուտի կարգավիճակ:

Միաժամանակ, տեղական ինքնակառավարումն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական պետության կարևորագույն ինստիտուտներից մեկն է, որի խնդիրն է ինքնուրույն, իր պատասխանատվությամբ համայնքի շահերից բխող տեղական նշանակության հանրային հարցերի լուծումը՝ տեղի պայմաններին ու առանձնահատկություններին համապատասխան:

Տեղական ինքնակառավարման մասին տեսության հիմնադիրներից մեկը՝ ֆրանսիացի պետական գործիչ, պատմաբան և դիվանագետ Ալեքսիս դը Տոքվիլը 1835թ.-ին լույս տեսած իր «Ժողովրդավարությունն Ամերիկայում» գրքի մեջ գրել է. «Վերցրեք համայնքներից նրանց ուժն ու անկախությունը և դուք նրանց մեջ կգտնեք միայն կառավարվողների, բայց այդ ժամանակ հույս չունենաք տեսնել նրանց մեջ քաղաքացիների»¹:

Տեղական ինքնակառավարման տեսությունները հիմնականում ձևավորվել են 19-րդ դարում: Տեսության տարատեսակներից են՝ հասարակական տեսությունը, պետական տեսությունը և պետական-հասարակական տեսությունը:

Հասարակական տեսություն²: Այս տեսության ներկայացուցիչներն են Ռ. Գնեյսթը, Է. Մայերը, Օ. Լաբանդը, Օ. Լեսսերը: Նրանց կարծիքով, իշխանության երեք թևերին՝ օրենսդիր, գործադիր և դատական, անհրաժեշտ է միացնել նաև չորրորդը՝ համայնքային իշխանությունը:

Համայնքը պետք է իրավունք ունենա գոյատևել ինքնուրույն, կենտրոնական իշխանությունից անկախ, ընդ որում, պետությունը ոչ թե ստեղծում է համայնքը, այլ ընդամենը ճանաչում է նրան: Իշխանության կրողը համայնքում՝ համայնքի բնակչությունն է: Սրանից հետևում է, որ համայնքն ամբողջովին անկախ է պետությունից, պետությունն իրավունք չունի խառնվել համայնքի ներքին գործերին, համայնքային պաշտոնյաները պետական պաշտոնյաներ չեն: Սակայն այս տեսությունը, մեր կարծիքով, թերի է այնքանով, որ իրականում տեղական ինքնակառավարումը ոչ միայն ճանաչվում է, այլև կարգավորվում է վերահսկվում է պետության կողմից, և պետության ընդհանրապես չխառնվելը համայնքի կառավարման գործերին հնարավոր չէ (այսինքն. պետության կողմից համայնքների վերահսկումը գոնե պարտադիր է):

¹ Stu, Бабун Р. В. «Организация местного самоуправления», С.Петербург – 2005, с. 10

² Stu Система муниципального управления. Учебник для вузов. Под ред. В.Б.Зотова. СПб. 2005., стр. 16.

Հասարակական տեսության տարատեսակներից են տնտեսական տեսությունը (Ռ. Մոլ, Ա. Վասիլչիկով), իրավական տեսությունը և քաղաքական տեսությունը:

Համաձայն տնտեսական տեսության³ ինքնակառավարման գործառույթները խիստ տնտեսական են: Դրանով է պայմանավորված, որ համայնքներն ինքնուրույն են և չունեն պետական վերահսկողություն:

Մյուս տարատեսակը՝ իրավական տեսությունն⁴ է, համաձայն որի՝ ՏԻՄ-երն իրականացնում են պետական կառավարման գործառույթների մի մասը, սակայն նրանք ոչ թե պետական, այլ համայնքային կառավարման մարմիններ են: Համաձայն այս տեսության, ինքնակառավարվող բոլոր միավորները դիտվում են որպես պետական կառավարման իրավունքով օժտված սուբյեկտներ: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է, որպես պետության կողմից նշանակովի մարմինների հակակշիռ, տեղերում ունենալ նաև տեղական ինքնակառավարման ընտրովի մարմիններ:

Քաղաքական տեսությունը⁵ ստեղծվել է միջնադարի սկզբին Ռուսաստանում, համաձայն որի՝ ՏԻՄ-երը պրոֆեսիոնալ չինքնակառավարման են, քանի որ նրանք իրենց պաշտոններին հասնում են ոչ թե պետության կողմից նշանակվելով, այլ տեղի բնակիչների կողմից ընտրվելով: Ինքնակառավարումը դրսևորվում է բնակիչների ինքնուրույնությամբ, ինչի հետևանքով էլ նրանք ազատ են իրենց կամքն արտահայտելու հարցում:

Տեղական ինքնակառավարման պետական տեսության⁶ հիմնադիրները (Լ. Շտեյն, Ն. Լազարևսկի, Ա. Գրադովսկի) պնդում էին, որ տեղական ինքնակառավարումը պետության մի մասն է, ինչից ելնելով էլ հնարավոր չէ իրարից հստակ տարանջատել պետական և համայնքային գործերը: Համաձայն այս տեսության՝ համայնքային գործերը պետական գործերի մասն են կազմում, որոնք տրված են ՏԻՄ-երին: Համայնքային իշխանության աղբյուրը՝ պետությունն է: Տեղական իշխանությունը պետական իշխանության մասն է և ծառայում է պետական շահերին և նպատակներին: Խորհրդային իշխանության տարիներին տեղական կառավարումն իրականացվում էր՝ հենվելով հենց այս տեսության դրույթների վրա:

Ներկայիս համամարդկային հասարակության մեջ տեղական ինքնակառավարման շուրջ ձևավորվել է մոտեցում, համաձայն որի այն համարվում է ցանկացած ժողովրդավարական հասարակարգի անհրաժեշտ հիմքերից մեկը, պետության մեջ իշխանության ձևավորման հիմնական սկզբունքը և քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ պայմանը:

«Ինքնակառավարում» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է դեռևս Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում՝ պետության շրջանակներում համայնքների ինքնուրույնությունը փաստելու համար: Այս հասկացության ծագումը կապված է պրուսական Նախարար Հայնրիխ Ֆոն Շտայնի (1757-1831թթ.)⁷ հետ, որը ինքնակառավարումը համարում էր ավելին, քան պարզապես տեղական մակարդակում պետության կառավարման գործում քաղաքացիների մասնակցության ձև: Այն ժամանակվա Պրուսիայում, որին սպառնում էր քայքայումը, Հայնրիխ Ֆոն Շտայնը ձգտում էր սերմանել միասնական հանրությանը պատկանելու զգացումը: Այդ պատճառով նա հանդես էր գալիս հանուն այնպիսի տեղական ինքնակառավարման, որը պետք է մեծապես անկախ լիներ պետությունից: Միայն հետագայում տեղական ինքնակառավարման հասկացությունը սկսեց կիրառվել քաղաքացիների քաղաքական ու անձնական ազատությունների արժևորման իմաստով՝ դրանում ամփոփելով պետության կառավարման մարմիններից անկախության գաղափարը:

Պետության գործառույթ ասելով հասկանում ենք պետական իշխանության մարմինների կողմից կառավարչական ներգործության իրականացման տեսակները և ուղղությունները: Այլ կերպ ասած՝ պետության գործառույթներն իրենցից ներկայացնում են գործունեության այն ուղղությունները, որոնք արտահայտում են պետության ելությունը և հասարակության կառավարման սոցիալ-քաղաքական նշանակությունը: Այս համատեքստում պետությունը կարելի է դիտարկել իբրև կառավարող համակարգ կամ կառավարման սուբյեկտ հասարակության նկատմամբ:

Պետության գործառույթները չի կարելի համարել մեկընդմիջ տրված և անփոփոխ: Դրանք ենթակա են փոփոխման՝ կախված պատմական, սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ պայմաններից: Սա առավել ակնհայտ է կառուցվածքային և կազմակերպական փոփոխությունների պայմաններում, երբ պետության որոշ գործառույթներ կորցնում են իրենց նշանակությունը և կարևորություն են ստանում նորերը: Այդ իսկ պատճառով էլ ընդունված է պետության գործառույթները բաժանել երկու մասի՝ մշտական և ժամանակավոր:

Բայց և այնպես, տեղական ինքնակառավարումը իրական զարգացում է ապրել XIX դարում՝ մոնիցիպալ բարեփոխումների շնորհիվ: Դրա հիմնական պատճառը ավատատիրությունից դեպի արդյունաբերական (ինդուստրիալ) հասարակարգի անցումն էր:

Տեղական ինքնակառավարումը հիմնական զարգացում ապրեց XIX դարում արդյունաբերական քաղաքների զարգացմանը զուգահեռ, երբ նորահայտ բուրժուազիան ձգտում էր ընդլայնել քաղաքի ինքնուրույնությունը, երբ քաղաքները ձեռք բերեցին իրավաբանական անձի կարգավիճակ և քաղաքային սեփականություն՝ այն ինքնուրույն տնօրինելու իրավունքով:

Հետագայում, տեխնիկական առաջընթացի զարգացմանը, սոցիալ-տնտեսական ոլորտում պետության դերի մեծացմանը զուգահեռ, մեծացավ նաև հանրային կառավարման համակարգում տեղական ինքնակառավարման դերը, ինչը հանգեցրեց տեղական ինքնավարության և ազատությունների ավանդական արժեքների վերագնահատման: Տեղական ինքնակառավարումը սկսվեց դիտվել արդեն ոչ թե որպես համաժողովրդական նպատակ, այլ տեղական ինդիվիդուալ լուծելու միջոց: Եվ այն, ինչ նախկինում համարվում էր տեղական իշխանությունների իրավունքը, վերածվեց նրանց պարտականության և պետք է իրականացվեր կենտրոնական իշխանության վերահսկողությամբ:

XX դարի կեսերին, ելնելով Եվրոպայում քաղաքական կայունության, տնտեսական և սոցիալական զարգացման, ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությանը նպաստելու անհրաժեշտությունից, Եվրոպական 18 երկրներ (Բելգիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Դանիա, Իռլանդիա, Մեծ Բրիտանիա, Նորվեգիա, Ֆրանսիա, Շվեդիա, Թուրքիա, Իսլանդիա, ԳՖՀ, Ավստրիա, Կիպրոս, Շվեյցարիա, Մալթա, Նիդերլանդներ և Հունաստան) 1949 թ.-ի մայիսին հիմնադրում են Եվրոպայի խորհուրդը:

Ըստ ՏԻ Եվրոպական Խորհրդի՝ տեղական ինքնակառավարումը ՏԻՄ-երի իրավունքն ու իրական ունակությունն է՝ նպատակաուղղված պետական գործերի մի զգալի մասի կանոնակարգմանը և կառավարմանը՝ գործելով օրենքի շրջանակներում, սեփական պատասխանատվությամբ և ելնելով տեղական բնակչության շահերից: Դրա հետ մեկտեղ

³ Նույն տեղում, էջ 17:

⁴ Նույն տեղում, էջ 17:

⁵ Ств Система муниципального управления. Учебник для вузов. Под ред. В.Б.Зотова. СПб. 2005., стр. 17.

⁶ Նույն տեղում:

⁷ Ств Стелական ինքնակառավարման հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ /տ.գ.դ., պրոֆ. Է.Յ.Օրդյանի ղնի/., Խմբ./, Երևան, «Պետական ծառայություն», 2000, էջ 13:

սահմանվում է, որ այդ իրավունքն իրականացվում է ոչ միայն ինքնակառավարման ընտրովի մարմինների կողմից, այլև տեղական ինքնակառավարման գործառնությունների իրականացմանը բաղաբացիների ուղղակի մասնակցության ձևերի միջոցով⁸:

Տեղական ինքնակառավարման էությունը տեղի բաղաբացու այնպիսի իրավունքի ճանաչումն է, որով վերջինս կլինի իշխանության աղբյուր, առօրյա հարցերում ինքնուրույն որոշումներ կընդունի և ինքն էլ պատասխանատվություն կկրի դրանց հետևանքների համար⁹:

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ տեղական ինքնակառավարումը ՏԻՄ-երի իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի քննիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հարցերը¹⁰:

Ընդհանրացնելով՝ կարող ենք հանգել նրան, որ տեղական ինքնակառավարումը տեղերում իշխանության կազմակերպումն է, որը ենթադրում է տեղի բնակչության կողմից տեղական հարցերին վերաբերող ինքնուրույն որոշումների կայացում, տեղի սեփականության և ֆինանսների կառավարում: Տեղական ինքնակառավարումն իրականացվում է տեղի բնակչության կողմից իրենց կամքի արտահայտման տարբեր եղանակներով, ինչպես նաև տեղական ընտրովի և այլ մարմինների միջոցով:

Ընդհանրապես, մասնագիտական գրականության մեջ ընդունված է առանձնացնել տեղական ինքնակառավարման համակարգի բազմաթիվ մոդելներ և դրանց տարաբնույթ դասակարգումներ, որոնցից ամենահայտնին հիմնվում է տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների բնույթի վրա: Այս չափանիշից ելնելով՝ միջազգային պրակտիկայում առանձնացվում են տեղական ինքնակառավարման համակարգի մի քանի մոդելներ՝ մայրցամաքային, խառը¹¹ և անգլոսաքսոնական: Մայրցամաքային համակարգին հարում են Ֆրանսիան, Լատինական Ամերիկայի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրները: Այս համակարգի բնորոշ գծերն են՝

ա) տեղերում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համատեղումը,

բ) տեղերում խիստ վարչական հսկողության սահմանումը,

գ) տարբեր աստիճանի ՏԻՄ-երի միջև ստորադասության առկայությունը,

դ) պետական իշխանության մարմինների կողմից ՏԻՄ-երի նկատմամբ անմիջականորեն ներգործելու լայն լիազորությունները:

Խառը համակարգին հարում են Գերմանիան, Ճապոնիան, Ավստրիան և այլն: Այս համակարգին բնորոշ են ինչպես անգլոսաքսոնական ու մայրցամաքային համակարգերի գծերը, այնպես էլ այնպիսի առանձնահատկություններ, որոնք բացակայում են վերը նշված համակարգերում: Այսպես, օրինակ Գերմանիայում շրջանային և շրջանային նշանակության բաղաբացի ՏԻՄ-երի տնօրենները միաժամանակ համարվում են պետական պաշտոնյաներ:

Իհարկե, տարբեր դասակարգումների շրջանակներում մոդելների այդ ցանկը համարվում կամ պակասեցվում է, սակայն տեղական ինքնակառավարման համակարգի կառուցվածքագործառնության հիմնարար ընդհանրությունները և առանցքային տարբերությունները հնարավոր է ներկայացնել հենց այդ երեք մոդելի միջոցով: Անդրադառնալով տեղական ինքնակառավարման համակարգի մոդելներից յուրաքանչյուրի հիմնական բնորոշիչներին և առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ տեղական ինքնակառավարման անգլոսաքսոնական մոդելը ձևավորվել է դասական մունիցիպալիզմի հայրենիքը համարվող Մեծ Բրիտանիայում, որտեղ դեռևս 11-րդ դարում համայնքները ձեռք բերեցին ինքնակառավարման լայն իրավասություններ ոչ միայն պետական որոշումները և տեղերում պետական կառավարումն իրականացնելու գործընթացներում, այլև ինքնուրույն որոշումներ կայացնելու, օրենքներ ընդունելու և տեղային բյուջե ունենալու առումներով¹²: Այս մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ենթադրում ու նախատեսում է տեղական ինքնակառավարման համակարգի՝ պետական կառավարումից բավականին անկախ և ինքնուրույն գործելու լայն հնարավորություններ: Անգլոսաքսոնական մոդելում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինները գործում են որպես, պառլամենտի կողմից իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, ինքնուրույն գործող կառույցներ, որոնք, փաստորեն, չունեն որևէ ուղղակի ենթակայություն պետական կառույցներին:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է որոշակի տարածքի վրա, այդ տարածքում բնակվող բնակչության ներկայացուցիչների կողմից: 1985թ.-ին ընդունված Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով՝ տրվել է տեղական ինքնակառավարման ընդհանուր սահմանումը, որը դարձել է համապիտանի և ընդունվել ժողովրդավարական երկրների մեծամասնությունում¹³:

Տեղական ինքնակառավարման հայեցակարգային հիմնադրույթներից կարևորն այն է, որ համայնքները հանդիսանում են ժողովրդավարական հասարակության հիմքը, իսկ բնակիչների իրավունքը՝ մասնակցելու հասարակական գործերի կառավարմանը, կազմում է ժամանակակից պետությունների մեծամասնության պետականաշինության ժողովրդավարական կարևոր սկզբունքներից մեկը: Ըստ այդմ՝ ՏԻՄ-երի ուժը և ազդեցությունը, որի մակարդակը տարբեր երկրներում տարբեր է, ուղղակիորեն արտացոլում է գործող բաղաբացական պայմանակարգի (ռեժիմի) ժողովրդավարության աստիճանը:

Տեղական ինքնակառավարումն իր մեջ ներառում է նաև պետության որոշ գործառնություններ, մասնավորապես, տեղական ինքնակառավարման սկզբունքներից է պետական մարմինների լիազորությունների փոխանցումը համայնքներին, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում՝ օրենքով դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պարտադիր ապահովմամբ:

Պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը օրենքով կարող է փոխանցվել համայնքներին՝ որպես պետության կողմից պատվիրակված լիազորություններ: Պետության կողմից պատվիրակված լիազորություններն ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին:

Դրանով հանդերձ, ՏԻՄ-երը առաջին հերթին հաշվետու են իրենց ընտրողներին՝ համայնքի բնակիչներին: Իսկ պետության հետ նրանց փոխհարաբերությունները ունեն պարզապես վերահսկողական բնույթ, այսինքն պետությունն իրականացնում է վերահսկողություն ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ, այն էլ երբ խոսքը վերաբերում է

⁸ Տես, Եվրոպական խարտիա 'Տեղական ինքնակառավարման մասին', Ստրասբուրգ, 1985թ., հոդված 3

⁹ Տես, Бабун Р. В. "Организация местного самоуправления", Питер – 2005, с. 10

¹⁰ Տես, ՀՀ Սահմանադրություն, հոդված 179:

¹¹ ՀՀ Մունիցիպալ իրավունք, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ-2015:

¹² Տես Չիրկին В. Е. Организационные формы местного самоуправления: Россия и зарубежный опыт // "Журнал российского права", 1997, № 8, էջ 98:

¹³ «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիա, 1985թ.

պարտադիր խնդիրների լուծման համար օրենքով վերջիններիս վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորություններին:

Այլ կերպ ասած՝ տեղական ինքնակառավարումը հանդես է գալիս որպես իշխանություն, սակայն այն պետական իշխանության մաս չի կազմում, պարզապես այն գործում է պետության կողմից սահմանված օրենքների շրջանակներում: Այստեղ հատկանշականն այն է, որ պետությունը ոչ միայն իր գործառնությունների մի մասը փոխանցում է համայնքներին, այլ նաև նրանց օժտում է դրանց իրականացման շրջանակներում որոշումների կայացման որոշակի լիազորություններով:

Տեղական ինքնակառավարումն օժտված է իշխանությանը բնորոշ բոլոր հատկանիշներով, և նախևառաջ, գլխավոր հատկանիշով, այն է՝ նրա որոշումները ենթակա են պարտադիր կատարման համայնքի բոլոր քնակիչների և սուբյեկտների կողմից: Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է ՏԻՄ-երի՝ համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի միջոցով, որոնք ընտրվում են օրենքով սահմանված կարգով:

Համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Տեղական հանրաքվեի անցկացման կարգը սահմանվում է օրենքով:

Ներկայումս զարգացած արտասահմանյան երկրներում տեղական ինքնակառավարման համակարգի հիմնական հատկանիշներից մեկը կարելի է համարել համակարգի համապիտանիությունը (ունիվերսալությունը) և տեղական մակարդակով հարցերի լուծման գործում նշանակալի ինքնուրույնությունը: Այն հենվում է տեղական սեփականության, տեղական հարկերի տնօրինման, տեղական ինքնակառավարման մակարդակով նորմատիվ ակտերի ընդունման, և այլնի վրա: Այս ամենը, ինչպես նաև մի շարք այլ դրույթներ ընկած են տեղական ինքնակառավարման սկզբունքների հիմքում: Վերջիններս իրենց իրավական ամրագրումն են ստացել Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայում, որը Եվրոպայի հորիզոնի անդամ երկրների տեղական ինքնակառավարման օրենսդրության իրավական հիմքն է: ՏԻՄ-երը օրենքով սահմանված կարգով ընտրվում են որոշակի ժամկետով՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Տեղական ինքնակառավարման համակարգի միասնությունը դրսևորվում է նրանում, որ այդ համակարգի բոլոր կազմակերպական ձևերը գործում են համատեղ, գտնվում են սերտ փոխգործակցության և փոխկապակցության մեջ: Այդ միասնական համակարգի տարրերից յուրաքանչյուրը, չնայած համակարգի ներսում առկա իրավասության առարկաների և լիազորությունների սահմանազատմանը, միմյանց հետ գտնվում են ենթակայության կամ վերահսկողության հարաբերությունների մեջ:

Ամփոփական ժողովրդաիշխանությունը տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվում է համայնքներում ապրող բնակչության անմիջական կամահայտնության ամենատարբեր ձևերով և միջոցներով: Այդպիսի ձևեր են համարվում տեղական հանրաքվեն, ընտրությունները, հավաքները, բնակչության ժողովները և մի շարք այլ կազմակերպական ձևեր, որոնց միջոցով ապահովվում է տեղական ինքնակառավարման համակարգի կարևորագույն տարրերի՝ ինքնակառավարման մարմինների գործունեության կազմակերպումը: Այս առումով, կարելի է ասել, որ տեղական ինքնակառավարման գործնական իրականացման ընթացքում ժողովրդաիշխանության անմիջական և ներկայացուցչական ձևերը սերտորեն միահյուսված են՝ լրացնելով միմյանց:

Օգտագործված գրականություն

1. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2016), Վ. Շահբաջյան, Վան Արյան, Երևան, 2017:
2. Տեղական ինքնակառավարման հիմունքներ (ուսումնական ձեռնարկ), Է. Օրդյանի ընդհանուր խմբագրությամբ, Պետական ծառայություն, Երևան, 2000:
3. Մենեջմենթ /ԳԱԱ թղթ. անդամ Յու. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ/Երևան, Տնտեսագետ, 2009:
4. Եվրոպական խարտիա «Տեղական ինքնակառավարման մասին», Ստրասբուրգ, 15.10.1985 թ.:
5. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», ընդունվել է 07.05.2002 թ.:
6. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքէջ՝ mtad.am:
7. ՀՀ Համայնքների ֆինանսիստների միավորման կայքէջ՝ cfoa.am

Ներկայացվել է 10.11.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.